ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/24

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 18.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ն 18.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Աճուրդի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում բժշկական պարագաները:

Աճուրդ հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 08.02.2019թ. ժամը՝ 15:55:

Հակադարձ աճուրդի ժամկետ է սահմանվել 11.02.2019թ. ժամը՝ 11:00:

Աճուրդ մասնակցության հայտ է ներկայացվել «ԱԳԱՍՏ» ՍՊԸ-ի և «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից:

Հակադարձ աճուրդի առաջին 5 րոպեի ավարտից հետո ծրագրում բացվել է պատուհան, որում ներկայացված էր տեղեկատություն Աճուրդ 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով աճուրդի կայացման մասին:

Աճուրդի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով աճուրդը շարունակվել է և Ընկերության կողմից ներկայացվել են բավականին ցածր գներ: Աճուրդը դադարել է ավարտից 20 վայրկյան առաջ, ինչի հետևանքով Ընկերությունը հնարավորություն չի ունեցել ներկայացնել վերջնական գները, որից հետո ծրագրում Աճուրդի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով կայացման տեղեկատվությամբ պատուհան բացվելու փոխարեն բացվել է նախաաճուրդային վիճակի էջը (նույնպես 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով), թույլ չտալով կատարել մասնակցության հետ կապված որևէ գործողություն:

Աճուրդի ավարտից հետո՝ 11.02.2019թ ժամը 11:31-ին Ընկերության էլ. փոստի հասցեին եկել է հակարդարձ աճուրդի ավարտի մասին ծանուցում, համաձայն, որի Ընկերությունը աճուրդը հաղթել է նախնական ներակացված գներով, այնինչ Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ հայտերի բացման նիստի թիվ 1 արձանագրության 6-րդ կետում ներկայացված են այլ տվյալներ, որոնք տարբերվում են նաև աճուրդի ընթացքում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկված գներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝

1. Էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

1) հրավերում նշված կոնկրետ պահի.

2) սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը.

3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

2. Պատվիրատուն, սույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

Ընկերությունը գտնում է, որ հակադարձ աճուրդի ընթացքում Էլեկտրոնային աճուրդի համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում սահմանափակվել է մրցակցությունը և նրա մասնակցությունը հակադարձ աճուրդին:»:

«Ֆրեզեն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբեյալ:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Ֆրեզեն» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Հայկ Ղազարյանը:

2. <u>«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 18.02.2019թ. գրությամբ դիմել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրությունը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ն:

ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանվել է՝

- հրապարակման ժամանակ 31.01.2019թ. ժամը 15:21:42,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ 08.02.2019թ. ժամը 11:00:00,
- հակադարձ աճուրդ 11.02.2019թ. ժամը 11:00:00:

Հանձնաժողովը 11.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրության 6-րդ կետով որոշել է Աճուրդի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, և 6-րդ

չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ին:

«ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ն 18.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ժամկետ է սահմանվել՝ 11.02.2019թ. ժամը 11:00-ն: Հակադարձ աճուրդի առաջին 5 րոպեի ավարտից հետո ծրագրում բացվել է պատուհան, որում ներկայացված է եղել տեղեկատվություն Աճուրդի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Աճուրդը շարունակվել է և Ընկերության կողմից ներկայացվել են բավականին ցածր գներ: Աճուրդը դադարել է ավարտից 20 վարկյան առաջ, ինչի հետևանքով Ընկերությունը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու վերջնական գները և Աճուրդի ավարտից հետո Ընկերության էլ. փոստի հասցեին եկել է հակարդարձ աճուրդի ավարտի մասին ծանուցում, որի համաձայն Ընկերությունը ճանաչվել է Աճուրդի առաջին տեղ զբաղեցնող մասնակից նախնական ներակացված գներով:

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 22.02.2019թ. գրությամբ դիմել է էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասրկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «Ֆրեզեն» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված բողոքի քննության նպատակով իրականացվող նիստերին ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունը:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ համակարգում 11.02.2019թ. որևէ ծրագրային խափանում չի եղել և հակադարձ աճուրդի ավարտը ֆիքսված է 11.02.2019թ. ժամը 11:30:00:

Միաժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Աճուրդի գնառաջարկների ցանկի կարճապատկերումը, որտեղից երևում է, որ հակադարձ աճուրդով 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով եղել է գնիջեցում՝մասնավորապես.

- ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի և «ԱԳԱՍՏ» ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

- 2-րդ չափաբաժին - ֆիստուլայի ասեղներ.

- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	3114936 AMD	11.02.2019թ. ժամը 11:00:54
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	3083472 AMD	11.02.2019թ. ժամը 11:04:21
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	3052008 AMD	11.02.2019թ. ժամը 11:08:46
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	3020544 AMD	11.02.2019թ. ժամը 11:10:34
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2989080 AMD	11.02.2019թ. ժամը 11:13:13
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	2957616 AMD	11.02.2019թ. ժամը 11:14:22
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2926152 AMD	11.02.2019թ. ժամը 11:17:53
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	2894688 AMD	11.02.2019թ. ժամը 11:18:53
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2863224 AMD	11.02.2019թ. ժամը 11:22:52
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	2831760 AMD	11.02.2019թ. ժամը 11:23:06
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2800296 AMD	11.02.2019թ. ժամը 11:26:29

- 3-րդ չափաբաժին - ֆիստուլայի ասեղներ.

- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	3083472 AMD	11.02.2019թ. ժամը 11:04:12
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	3052008 AMD	11.02.2019թ. ժամը 11:08:02
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	3020544 AMD	11.02.2019թ. ժամը 11:08:18
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2989080 AMD	11.02.2019թ. ժամը 11:12:25
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	2957616 AMD	11.02.2019թ. ժամը 11:13:24
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2926152 AMD	11.02.2019թ. ժամը 11:17:30
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	2894688 AMD	11.02.2019թ. ժամը 11:18:49
- «ԱԳԱՍՏ» ՍՊԸ	2863224 AMD	11.02.2019թ. ժամը 11:22:26
- «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ	2831760 AMD	11.02.2019թ. ժամը 11:26:08

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 42-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

1) հրավերում նշված կոնկրետ պահի.

2) սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը.

3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

• 2-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն, նույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով հակադարձ աճուրդը սահմանվել է 11.02.2019թ. ժամը 11:00:00:

- ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով հակադարձ աճուրդի ավարտը եղել է 11.02.2019թ. ժամը 11:30:00-ին:

- էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն համակարգում 11.02.2019թ. ծրագրային խափանում չի ֆիսվել:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Ընկերության կողմից 18.02.2019թ. բողոքով ներկայացված փաստարկները չհիմնավորվեցին և չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ 11.02.2019թ. հակադարձ աճուրդի ընթացքում Էլեկտրոնային աճուրդի համակարգը աշխատել է խափանումներով, ուստի Բողոքներ քննող անձը գնտում է, որ «ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. բողոքով ներկայացված փաստարկներն անհիմն են:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՖՐԵԶԵՆ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ